ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1964 Общественные науки

Ա. Ա. Ադամյան

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ 1812 Թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) արխիվային ֆոնդերում կան բազմաթիվ վավերագրեր 1812 թ. Հայրենական պատերազմի վերաբերյալ։ Դրանց մեծ մասը պաշտոնական գրությունների ընդօրինակություններ են, որոնցից մի քանիսը վերջերս տպագրվել են[1]։ Սակայն Մատենադարանի արխիվային ֆոնդերում կան ֆրանսերեն, հայերեն և ռուսերեն մի շարք վավերագրեր, որոնք մինչև այժմ մեր ուսումնասիրողների ուշադրությանը չեն արժանացել, թեև դրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում 1812 թ. Հայրենական պատերազմի մասին։

Հիշյալ վավերագրերի դգալի մասը Հովակիմ Լազարյանի որդիներից մեկի՝ Հարություն (Արտեմ) Լազարյանի ռազմաճակատից իր եղբորը՝ Խաչատուր (Քրիստաֆոր) Լազարյանին 1812 թ. մարտի 5-ից մինչև 1813 թ. սեպտեմբերի 20-ը ֆրանսերեն[2], մասամբ նաև ռուսերեն լեզուներով գրած նամակներն են[3]։ Դրանք արժեքավոր են այն տեսակետից, որ գրված են պատերազմին մասնակցող, ականատես անձնավորության կողմից։

Հարություն Լազարյանը եղել է ռուսական հուսարական գնդի շտաբս-ռոտմեստրը և գործոն մասնակցություն է ունեցել ռազմական գործողություններին ու պարգևատրվել մի քանի շքանշաններով։ Նա ռազմաճակատից անընդմեջ նամակներ է գրել եղբորը և կարևոր տեղեկություններ հաղորդել պատերազմական իրադարձությունների մասին։ Նամակները ընդհատվել են 1813 թ. սեպտեմբերի 20-ից հետո։ Հ. Լազարյանը սպանվել է 1813 թ. հոկտեմբերի 16-ին Լայպցիգի արյունահեղ ճակատամարտում։

---

1 Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Լազարյանների արխիվային ֆոնդում 1807 թ. ռուս-ֆրանսիական և 1812 թ. Հայրենական պատերազմների վերաբերյալ ռուսերեն լեզվով բազմաթիվ պայմանագրերի, հրամանների, կոչերի և այլ պաշտոնական գրությունների ընդօրինակություններ կան։ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի արխիվում պահպանվում է Դանիել կաթողիկոսի Նապոլեոնին ուղղած 1808 թ. մի կոնդակը և Նապոլեոնի՝ ոմն Մր. Պիեր Շաբոնին պատվո լեգեոնի ասպետի կոչում տալու մասին մագաղաթի վրա ֆրանսերեն լեզվով գրած հրովարտակը, որն անձամբ ստորագրել է Նապոլեոնը և կցել զմուռե կնիքը։ 1812 թ. Հայրենական պատերազմի վերաբերյալ կաթողիկոսական դիվանի արխիվային ֆոնդում պահվում է նաև 4 վավերագիր (թղթ. 24, վավ. 8, 10, 18 և 22), որոնք պրոֆ. Մ. Ներսիսյանը հրատարակել է ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1944 թ. 3—4 միացյալ համարում։

2 Հ. Լազարյանի ֆրանսերեն նամակները թարգմանել է Լևոն Մարտիրոսյանը։

3 Մարգո Մխիթարյանը «Բանբեր Մատենադարանի» № 5, 1960 թ. հանդեսի մեջ հրատարակած իր «Մատենադարանի Լազարյանների արխիվը» հոդվածում ընդհանուր գծերով նշել է հիշյալ արխիվում եղած վավերագրերի բնույթի և Լազարյանների գործունեության մասին, որտեղ հիշել է նաև 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցած Հարություն Լազարյանի նամակների ընդհանուր բնույթի մասին։

Մատենադարանի արխիվում գտնվող Հարություն Լազարյանի առաջին նամակը գրված է 1812 թ. մարտի 5-ին Լուգայից։ Նա այդ նամակում իր եղբորը Խաչատուրին գրում է. «...Մենք հասանք Լուգա, որը ավելի շուտ նման է մի գյուղի։ Ես նամակ գրեցի ծնողներիս, արդյոք այն դուր կգա՞ հորս, թե ոչ։ Խոստովանում եմ, որ լավ չեմ շարադրել այն, բայց ինչ կարող է անել հոգնած գինվորը։ Ձեզ ուղարկում եմ մեր մարշրուտը, որի միջոցով դուք հնարավորություն կունենաք իմանալ, թե որտեղ և ուր ուղղել նամակները»[4]։

Նապոլեոնի հարձակման վտանգը նկատի ունենալով ռուսական զորամասերը շարունակ շարժման մեջ են գտնվել։ Այդ մասին Հարություն Լազարյանը 1812 թ. ապրիլի 20-ին եղբորը գրած նամակում հաղորդում է. «Մեր գունդը Վիլնոյից 120 վերստ հեռավորության վրա եղած լեհական աղքատ մի վայրում է գտնվում, որտեղ ես խիստ ձանձրանում եմ։ Հաճախ գնում եմ լեհական եկեղեցի աղոթելու։ Արդեն հասկանում եմ լեհերենը...։ Գվարդիան գտնվում է Վիլնոյի շրջակայքում, իսկ կայսրը՝ Վիլնոյում...»։ »

Նույն նամակի թերթիկի վրա նա առանձին դիմել է իր ընկերոջը, որի հետ հավանական է, սովորել է ռազմական դպրոցում. «Сердечно желаю, чтобы ты был в числе 12 человек и отличался бы в науках и сделался славным русским офицером...»[5].

1812 թ. մայիսի 26-ին եղբորը ուղղած մի այլ նամակում նա գրում է. «...Հետևակ գվարդիան պետք է գնա Վիլնոյի մոտերքը, որտեղ տեղի է ունենալու մանևր կայսրի ներկայությամբ... Մեր գնդի մասին ասում են, որ շուտով պետք է տեղափոխվի թե որ կողմը, ոչ ոք չգիտե...»[6]։

Ցարական կառավարությունը, ինչպես ասացինք, տեղյալ լինելով Նապոլեոնի Ռուսաստանի վրա հարձակվելու ուղղությունների պլանի հետ, Վիլնոյի շրջակայքում շատ զորքեր է կենտրոնացրել։

Հարությունը այդ մասին 1812 թ. հունիսի 8-ին եղբորը գրում է. «Ահա մենք ավելի ենք մոտեցել Վիլնոյին, որից 65 վերստ հեռավորության վրա ենք գտնվում։ Ամբողջ բանակը համարյա Վիլնոյի շրջանումն է։ Мы теперь стали в местечке Шишоях и ежедневно ожидаем дальнейшего похода. Ոչ ոք ոչինչ չգիտե, սակայն բանակը շարունակում է առաջ շարժվել։ Вся гвардейская пехотная дивизия в Вязьме, и там бывают очень часто маневры, государь всегда тут бывает... Спешу отдельно написать Петру Абамелику, который едет в город Вильнюс...»[7].

Ռուսական հրամանատարությունը մեծ ուժեր է կենտրոնացնում նաև Դրեսսա քաղաքի մոտ, որտեղ եղել են նաև Ալեքսանդր կայսրը և Արակչեևը։ Նրանք սպասել են ռուս մեծ զորավար Բագրատիոնին և նրա բանակին, որ պիտի դար ու միանար տեղում եղած ռուսական բանակին։ Այդ մասին 1812 թ. հունիսի 29-ին եղբորը ուղղած նամակում Հարությունը գրում է. «Շտապում եմ օգտվել առիթից գրել ձեզ, որ ամբողջ զորքը հավաքվել է Դրեսսա քաղաքի մոտ։ Կայսրը նույնպես այստեղ է և տեղավորվել է փոքրիկ մի տնակում։ Ամեն ինչ հանձնված է Արակչևին, որը համարյա հրամայում է ողջ բանակին»։

---

4 Մատենադարան, Լազարյանների արխիվ. թղթ. 102, գ. 17, վավ. 55։

5 Նույն տեղում, վավ. 59։

6 Նույն տեղում, վավ. 57։

7 Նույն տեղում, վավ. 58։

Նամակի շարունակության մեջ ռուսերեն ավելացնում է. Здесь всего войска 125 тысяч, и в скором времени князь Багратион соединится, у которого тоже страшная армия, и увидимся с любимым братцом Давыдом Артемовичом. Наш полк был под Вилкомиром и прикрывал артиллерию. В это день я был ординарцем у Уварова и слышал визг ядер и пуль»[8].

Եղբորը՝ Խաչատուրին 1812 թ. սեպտեմբերի 7-ին գրած նամակից պարզվում է, որ նա առաջին անգամ մասնակցել է Նապոլեոնի դեմ վարած մեկ ճակատամարտին, ապա զորքի հետ անցել Մոսկվայով, հետաքրքրվել իրենց տան գործերով, տեսակցել իր փեսա Դելյանովի հետ։ Նամակից պարզվում է նաև, որ Նապոլեոնի հարձակման պատճառով «մի քանի իշխաններ» հեռացել են Պետերբուրգից «որպեսզի ավելի ապահով լինեն[9]»։ Երբ ռուսական բանակը հակահարձակման է անցնում, ետ դրավում Մոսկվան և այլ քաղաքներ, կրընկոխ հետապնդում թշնամուն, Հարությունն Լազարյանը անհապաղ այդ մասին հայտնում է հարազատներին. «Շտապում եմ Ձեզ հաղորդել ուրախալի մի լուր։ Ամսույս 6-ին թշնամին ջախջախվելով՝ մեծ թվով մարդկային զոհեր ու դերիներ տվեց, կորցրեց 31 թնդանոթ և սկսեց նահանջել։ Այդ օրվանից մենք նրան հետապնդում ենք։ Նրա նահանջը փոխվեց փախուստի և ընդամենը 5 օրվա ընթացքում նա կորցրեց ավելի քան 80 թնդանոթ, 4 դրոշակ և բազմաթիվ գերիներ տվեց»։ Նույն հոկտեմբերի 23-ի նամակի շարունակության մեջ եղբորը տեղեկացնում է, որ «Наши войска заняли уже Москву, Можайск, Гжацк и Вязьму и скоро будем в Смоленске, они так сильно ретируются, что наша армия не может его догнать и ежедневно почти берут у него пушки. Ты не можешь вообразить, сколько французов перебито нашими мужиками, теперь мы идем по их следам, и во всякой почти деревне лежат французские тела. У них вся кавалерия уничтожена, и ежедневно берут пленных, и у нас теперь считают пленных более 40 тысяч, кроме тех, которых перебили мужики... У нас кавалерия прибавляется, пожалуй, одних казаков пришло более 25-ти тысяч, а французы казаков, как огня, боятся...»[10].

Նամակի վերջում նա խոսք է տալիս, որ հայերեն նամակ կգրի։

Դարձյալ անդրադառնալով ռուսական զորքի հաջողություններին, նա նոյեմբերի 29-ի նամակում գրում է. «...Ձեզ ասեմ, սիրելի եղբայր, որ թշնամին փախուստի է մատնվել։ Ձեք կարող երևակայել թե ինչ քանակությամբ թնդանոթ և իրեր է թողնում։ Ներկայումս 500-ից ավելի գրված թնդանոթ ունենք, գրավել ենք փողով ու ոսկե դրամներով լիքը տակառներ։ Դեռ նախանցյալ օրը 20000 զինվոր և 5 դեներալ գերեցինք։ Այժմ մեր բոլոր բանակները միացել են իրար հետ և կարծում եմ, որ թշնամու ամբողջ բանակը կկործանվի։ Ամբողջ գվարդիան այժմ պատրաստվել է ձմեռելու։ Մեր գունդը դտնվում է Շկլովում, իսկ բանակը անդուլ կերպով հետապնդում է թշնամուն»[11]։

Ֆրանսիական զորքերին հետապնդելու ժամանակ ռուսական կոզակների

8 Նույն տեղում, վավ. 56։
9 Նույն տեղում, վավ. 52։
10 Նույն տեղում, վավ. 43։
11 Նույն տեղում, վավ. 46։

ուժեղ հարձակումների շնորհիվ Նապոլեոնը դժվար կացության մեջ է ընկնում։ Լուրեր են տարածվում այն մասին, որ Նապոլեոնը գերի է ընկել։

Հ. Լազարյանը այդ մասին 1812 թ. դեկտեմբերի 15-ին գրում է. «...Սիրելի եղբայր, եթե Նապոլեոնի գերվելը Պետերբուրգում հայտնի չէ, խնդրեմ ոչինչ չասել այդ մասին։ Այդ լուրը մեզ այնքան ուրախացրեց, որ ես նույնիսկ հորս շնորհավորեցի...»[12]։

Նապոլեոնի Ռուսաստանում կրած պարտությունից հետո իր նախկին վասալները՝ Գերմանիան և Ավստրիան միանում են Ռուսաստանին։ Անգլիական զորքերը, լորդ Վելլինգտոնի գլխավորությամբ, 1813 թ. Վիտտորիի մոտ լուրջ հարվածներ են հասցնում ֆրանսիական բանակին. «...Ձեզ հայտնի է,— գրում նա 1813 թ. հուլիսի 20-ի նամակում,—որ ֆրանսիացիները մեծ պարտություն կրեցին գեներալ Վելլինգտոնի կողմից, որը գրավեց ֆրանսիացիների ամբողջ հրետանին» և այնուհետև շարունակում. «Մեր բանակը օրրստօրէ մեծանում է։ Մեր հեծելազորը հրաշալի է։ Երեկ կայսրը և պրուսական թագավորը մեր հեծելազորի ստուգատես կատարեցին, որտեղ գտնվում էր նաև մեր գունդը։ Վարժություններ կատարեցինք և կայսրը շատ գոհ մնաց։ Իշխան Դավիթ Աբամելիքը պարգևատրվել է սուրբ Աննայի ադամանդյա խաչով և Վլադիմիրի 3-րդ կարգի խաչով, իսկ ես պարգևատրվեցի Վլադիմիրի 4-րդ կարգի և ս. Աննայի սրով։ Հույս ունեմ նորից պարգևատրվել երկու դեպքերի համար ևս»[13]։

Խոսելով հետագայում տեղի ունեցած ճակատամարտերից մեկի մասին, Հ. Լազարյանը հիշատակում է, որ «ոչնչացրինք 45 հազար մարդուց բաղկացած կորպուս»[14]։ Իսկ անդրադառնալով Կուլմայի մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին 1813 թ. սեպտեմբերի 12-ի նամակում գրում է. «...Ռուսական գվարդիան փառքով պսակվեց»[15]։ Մի շաբաթ հետո նույն ոգևորությամբ նա պատմում է. «Մենք այժմ գտնվում ենք Ավստրիայում, Տոպլեցից մեկ մղոն հեռավորության վրա։ Երեկ մենք մեծ ճակատամարտի բռնվեցինք, միայն մեր գունդը վերցրեց 20 թնդանոթ, ֆրանսիացիները փախան, թողնելով 5000 գերի։ Գերի վերցրեցինք նաև գեներալ-լեյտենանտ կոմս Վանդանին և երկու այլ գեներալների, նաև մեծ թվով սպաներ, ընդամենը գրավեցինք 60 թնդանոթ...»[16]։

1813 թ. սեպտեմբերի 20-ից պարզվում է, որ Կուլմայի ճակատամարտին հերոսական մասնակցություն են ունեցել նաև Դ. Դելյանովը և գնդապետ Դ. Աբամելիքի կրտսեր որդի Ալեքսան Աբամելիքը, որոնք արժանացել են բարձր պարգևների։ Օգտվելով առիթից, նամակներից մեկում նշում է Հ. Լազարյանը, «գրում եմ ձեզ այս քանի տողն այն մասին, որ իմ փեսա Դելյանովը ստացավ գեներալ-մայորի աստիճան, իսկ ես Կուլմայի ճակատամարտի համար ստացա սուրբ Աննայի երկրորդ կարգի վզի խաչ և սուրբ Վլադիմիրի խաչ։ Իշխան Ալեքսան Աբամելիքը ստացավ սուրբ Վլադիմիրի չորրորդ կարգի խաչ...»[17]։

---

12 Նույն տեղում, վավ. 47։
13 Նույն տեղում, վավ. 63։
14 Նույն տեղում, վավ. 68։
15 Նույն տեղում, վավ. 67։
16 Նույն տեղում, վավ. 66։
17 Նույն տեղում, վավ. 65։

Հարություն Լազարյանը մասնակցել է նաև Լայպցիգի նշանավոր ճակատամարտին, որը տեղի է ունեցել 1813 թվի հոկտեմբերի 16-ին (նոր տոմարով)։

Այդտեղ էլ 22 տարեկան հասակում, թշնամու արկից նա զոհվում է։ Քաջարի զինվորականի մարմինը փոխադրում են Պետերբուրգ և հանդիսավորությամբ թաղում հայկական գերեզմանատանը։

Բացի Հարություն Լազարյանի նամակներից, Մատենադարանի արխիվային ֆոնդերում գտնվում են 1812 թ. Հայրենական պատերազմի վերաբերյալ նաև ուրիշ վավերագրեր, որոնք նույնպես արժեքավոր տեղեկություններ են պարունակում։ Ինչպես հայտնի է, Նապոլեոնի արշավանքի ժամանակ Արևելյան Հայաստանը գտնվում էր պարսկական ծանր լծի տակ, հայ ժողովուրդը ամեն կերպ ձգտում էր միանալ Ռուսաստանին։ Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան դայրույթ պատճառեց նաև հայ ժողովրդին։

Այդ տեսակետից ուշագրավ է 1813 թ. հունվարի 26-ին Թիֆլիսից էջմիածին՝ Ներսես վարդապետին ուղղած ծածկագիր նամակը, որտեղ խոսվում է Նապոլեոնի Ռուսաստանից փախուստի, իր հետ տարած կողոպուտի, նրա կողմից նոր պատերազմ նախապատրաստելու, ապա Անդրկովկասում ռուս-պարսկական պատերազմի և ռուսական բանակի հաղթությունների մասին։ «Նոր լուր այս է,— գրում է այդ ծածկագրի հեղինակ Նահապետ Արշակյանը,-- Պոնապարթն Ռ. Ճ. Ի. (200000) զորօք անցկացաւ գնաց իւր հօղն. Հաստատն այս է զոր գրեմ. եթէ այլք ինչ ասիս, գրեն կամ ասեն, ունայն է, կամ քազետի գրութիւն, և տեղիս մայեպնի կատարելն այլ իմն բան է, որպէս գիտեք և այլն։

Մոսկովիցն Բ. Ճ. (200) արապա ոսկի և արծաթ տարիլ է հետն և երևում է պարունն մեծ կոիւ պիտի լինի ևս։ Այս գիրս գրած օրս Կատերևսկիեն գիր եկավ շահզատեի հետ կոիվ արիլ ին և շահզատեի բոլոր բանակն առիլ ին, այս հաստութիւն առաջվանցն չորս հատ ավել է լեալ։ Նախիջևանու գիր առի անգոհանակութիւն գրեն Օհանէս առաջնորդիցն և Գրիգոր վարդապետին կամին օծել և Կատերևսկուն ոտքն կոտրել է կուումն։ Այստեղից մին լավ դոկտուր պիտի ուղարկեն սոյն ամսուս ԻԵ-ին (25) այլ ևս զօրք ղրկելուց են նոր Լանքարան էլ առիլ ին։ Տալիշ էլ, Ֆարշ էլ...[18]։

1815 թ. Նապոլեոնին աքսորում են Սուրբ Հելինեի կղզին։ Նրա աքսորման լուրը ուրախություն է պատճառում աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդներին, որոնց թվում նաև հայ ժողովրդին։ Այդ տեսակետից արժեքավոր է 1815 թ. սեպտեմբերի 29-ին Թիֆլիսից Եփրեմ կաթողիկոսին ուղղված Ներսես Աշտարակեցու նամակը, որտեղ որպես ուրախալի լուր, հաղորդում է Նապոլեոնի աքսորվելը։ Ապա նա հայտնում է, որ ռուսական կայսրը շուտով լինելու է Պետերբուրգում, խաղաղությունը պահպանելու համար 350 հազար ռուսական և դաշնակից զորքեր թողնվել են Ֆրանսիայում։ Այդ մասին նա գրում է. «...ԶԲոնապարտն առաքեալ են ի Ծայրս Աֆրիկայի ի կղզին Սուրբ Կատարինէի կամ սուրբ Ելէնէի ասացեալ, զի ճգնեսցի անդէն։ Վասն կայսեր ասեն լինիլ ի Սանկտ Պետերբուրգ ամսեանն հոկտեմբերի, միայն 350 հազար զօրք Ռուսաց և բարեկամ տերութեանց ունեն մնալ ի Ֆրանսիայ երկար ժամա-

18 Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. № 24, վավ. № 193։ Տեղեկագիր 8—6

նակաւ մինչև արմատասցի խաղաղութիւն ի նոսա, որում դժուարաւ հետևին ֆրանցիացիք մինչև ցայսօր ժամանակի ևս»[19]։

1812 թ. Հայրենական պատերազմի ժամանակ ռուսական կառավարությունը, ռուսական բանակին ակտիվ օժանդակություն ցույց տալու համար, շատ քաղաքացիների պարգևատրում է շքանշաններով և այլ պարգևներով։ Պարգևատրվածների մեջ էին նաև Եփրեմ կաթողիկոսը, Ներսես, Հովհաննես և Գրիգոր արքեպիսկոպոսները և մի շարք քահանաներ ու աշխարհականներ։ Ուշագրավ է մանավանդ Կախեթի Խաչմեան գյուղի քահանա Գևորգ Տեր Մեհրաբյանին Հայրենական պատերազմի շքանշանով պարգևատրելու առթիվ 1820 թ. փետրվարի 23-ին Ներսես արքեպիսկոպոսի գրությունը, ուր ասված է.

«Յետ յաջողակի օժանդակութեամբ բարձրելոյն աւարտելոյ զպատերազմն ընդ Ֆռանկսուզաց, հաճոյ եղև Նորին կայսերականի մեծութեան ամենայն ողորմած թագաւորի մերում։ Ի մէջ բազում ողորմութեանց շնորհելոց առ հասարակ ամենայն հաւատարիմ հպատակաց իւրոց, յատկացուցանել և զհոգեվորականս առանձնակի նշանաւ դերարքայական բարեհաճութեան և երախտագիտութեան իւրոյ, որ բացահայտեալն է ի հրովարտակի գրեցելոյ ի 30 օգոստոսի 1814 ամի հետևեալ բանիւքս։

Սրբազան դասք հոգևորականաց մերոց որք վերակարդացեալ են առաջի սեղանոյ Ամենաբարձրելոյ ջերմեռանդ մաղթանօք իւրեանց զօրհնութիւն Աստուծոյ ի վերայ զինուց և զինուորութեան ամենայն Ռուսաց և յարացուցիչ բարեպաշտութեան խրախուսեալ են զժողովուրդն առ միաշնչութիւն և հաստատութիւն ի նշան ջերմեռանդութեան առ հաւատն և սիրոյ առ հայրենիս՝ կրեսցեն ի վերայ կրծ(ք)ոց իւրեանց սկսեալ ի ծայրագոյն հովուէ մինչև ցդասս քահանայից զկարգադրեալն յատկապէս վասն այսորիկ զխաչն վերտառութեամբ 1812 ամի։

Արդ՝ խաչքս այսորիկ ժամանեալք են յաղագս զարդարելոյ նօքօք զհոգեվորականս՝ ըստ որոյ և առաքեմ ընդ այսմ զմի ի յայսց խաչից առ ձեզ վասն կրելոյ ի վերայ կրծ(ք)ոց Վլադիմիրի էնտիւ համաձայն բարձրագոյն հրովարտակի 30 Օգոստոսի 1814 ամի և ըստ յատկական բարձրագոյն հրամանի յայտնեցելոյ ի ձեռն տեառն Նախարարին հոգևոր գործոց և ժողովրդական լուսաւորութեանց»[20]։

А. А. АДАМЯН

ДОКУМЕНТЫ ОБ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ 1812 г.

Резюме

В архивных фондах Института древних рукописей им. Маштоца — Матенадарана при Совете Министров Армянской ССР имеется ряд документов, содержащих ценные сведения об Отечественной войне 1812 г.

19 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. № 164բ, վավ. № 990։
20 Մատենադարան, արխիվային բաժին, Կաթ. դիվան, թղթ. № 258, վավ. № 118։

Большинство этих документов связано с деятельностью одного из членов известной семьи Лазаревых — Арутюна (Артема) Лазарева. Это фронтовые письма, написанные в 1812—1813 гг. Они написаны на французском и частью русском языках и адресованы его брату Хачатуру (Христофору) Лазареву. Письма содержат интересные сведения о сражениях, в которых принимал участие сам Арутюн Лазарев.

Арутюн Лазарев являлся штабс-ротмистром гусарского полка и за проявленную доблесть несколько раз был награжден орденами. Он был убит под Лейпцигом 16 октября 1813 г.

Вместе с письмами Арутюна Лазарева мы публикуем также письмо Нерсеса Аштаракского и Наапета Аршакяна, которое содержит ценные сведения о бегстве Наполеона из России, о его аресте и ссылке и о награждении ряда армян, оказавших материальную и моральную помощь русской армии в период Отечественной войны.